ARABKIR MEDICAL CENTRE
Արաբկիր
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF CHILD AND ADOLESCENT HEALTH
ՀՀ, ք. Երևան 0014, Մամիկոնյանց փ. 30, Հեռ.՝ (374 10) 236 883, Ֆաքս՝ (374 10) 284 170
30 Mamikonians str., 0014 Yerevan, Armenia, Tel. (374 10) 236 883, Fax: (374 10) 284 170
E-mail: info@arabkirmc.am

Տեղեկանք

Բուժառու՝ Ալեքս[redacted] *Ծննդյան ամսաթիվ՝* [redacted]*09*

Երեխան 2014թ-ից հսկվում է Արաբկիր ԲՀ հանրապետական մանկական ալերգոլոգիական դիսպանսերում Բրոնխային աստմա, ծանր կայուն ընթացք, կլինիկորեն նշանակալի սենսիբիլիզացիա ասպերգիլլուսի նկատմամբ: Չվերահսկվող մաքսիմալ դոզայի ինհալացիոն ստերոիդ/LABA դեղորայքով, մասնակի վերահսկվող մաքսիմալ դոզայի ինհալացիոն ստերոիդ/LABA դեղորայքով և օմալիզումաբով ախտորոշմամբ: Մշտապես ստանում է բազիս թերապիա, սակայն չի հաջողվում հասնել ամբողջական վերահսկողության:
2018թ. Սեպտեմբերին երեխան հոսպիտալացված է եղել վերակենդանացման բաժանմունքում ծանր սրացման պատճառով: Տարվա մեջ 3-4 անգամ կարիք էր ունենում հոսպիտալացման՝ չնայած հնարավոր կանխարգելիչ բուժման բոլոր միջոցառումներին: Ներկայումս Երեխայի վարումն իրականացվում է GINA 5-րդ աստիճանով: Քանի որ երեխան ունի սենսիբիլիզացիա ասպերգիլլուսի նկատմամբ, բարձր ընդհանուր IgE և հաճախակի սրացումներ, որոնք պահանջում են հոսպիտալացում վերակենդանացման բաժանմունքում, 2021 թ.-ին բուժման սխեմայում ընդգրկվել են մոնոկլոնալ հակամարմիններ (Omalizumab): Հաշվի առնելով դեղորայքի խիստ թանկ արժեքը և ընտանիքի անբարենպաստ սոցիալական վիճակը՝ դեղորայքի ձեռքբերումը կազմակերպվում է Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի միջոցով: Օմալիզումաբով բուժումը դադարեցնելուց հետո սրացումների հաճախականությունը ավելացել է, հոսպիտալացման կարիք է ունեցել, որից հետո Օմալիզումաբի ներարկումները կրկին վերսկսվել են, ինչից հետո երեխան սրացումներով պայմանավորված հոսպիտալացումներ չի ունեցել: Ներկայումս ստանում է Օմալիզումաբի ենթամաշկային ներարկումներ 300 մգ դեղաչափով 4 շաբաթը մեկ հաճախականությամբ: Հաշվի առնելով հիվանդության ծանր ընթացքը անհրաժեշտ է շարունակել Օմալիզումաբի ներարկումները նույն հաճախականությամբ:

Ծառայության ղեկավար՝ բ.գ.թ. Ա. Ա. Բաղդասարյան

09/04/2026 թ.